


մուած, բաց ի անկից՝ գոր փառօք գոր-
ծեց գերագոյն վտանգի մը մէջ, վերոյի-
շեալ թագաւորը մեծ ճակատամարտով մի-
ջողովայնեցոց և Պոմպէոսէ յաղթուելով,
փախչելով դէպ ի կողքիսի թագաւորու-
թիւնները, Սիւնհորիոս զոգեակին մէջ թո-
ղուց իր Դրիւպիսինա դուստրը, որ հի-
ւանդ էր, Մենոփոլոսի յանձնելով՝ որ
պէտք եղած դեղերով կոյսը առողջացնէ.
ասոր հօր՝ խնամքով ծառայեց, երբ Ման-
լիոս Պրիսկոս Հռովմայեցի զօրավարին տե-
ղակալէն իրեն զոգեակը պաշարուած տե-
սաւ և իմացաւ որ պահապանները անձ-
նատուր ըլլալ կը խորհին, և վախնալով
որ մի գուցէ իր սիրով նախասիրեց մ'ըլ-
լայ՝ ազնուական գերիին ապրելովն և բռ-
նաբարութեամբ, զանկաւ սպաննեց, և յե-
տոյ սուրը իսկոյն իր մարմնոյն մէջ մխեց:
Իսպա զառնանք ուսկից մեկնեցանք: Մար-
կեղղոս յաղթահարուեցաւ, աքսորուեցաւ
Մարդիկէ, ուր ծնած էր »:

Երբ գծտութիւններ ծագեցան Յուլիա-
նոսի և Կոստանդի մէջ, Եւթերիոս կրկին
քաղաքական ասպարէզ եկաւ իրբեւ դե-
պան Յուլիանոսի, թէպէտ Կոստանդ ի-
րեն ներկայացուած նամակէն զայրացած՝
դուրս վճռեց Եւթերիոսն և իր պաշտօ-
նակիցները (Ամիանոս Մարկելլինոս, Գլ.
Ի. Բ):



ԱՆՏԻՊԵՋԵՐ



Մեր միաբանակից վիր. Յ. Համազասպ վ.
Չափարեամ մուիրեց Ս. Ղազարոս մատենադա-
րանին, ի միջի այլոց, ձեռագիր Տաղարան մը,
որ ճոխ հաւաքածոյ մ'է և կը պարունակէ հա-
րիւր քսանէ մաւելի տաղեր, որոնց մէջ բարե-
բախտաբար կամ բաւական թուով կտորներ՝ զորս
տեսած չէի մեր մատենադարանի ձեռագրաց մէջ:
Մոյմ Տաղարանը ոչ թէ միայն իրբեւ ճոխ հա-
ւաքածոյ մը յարգի է մեզ, այլ վասն զի զայն
հաւաքողն և օրինակողն է Մոսփառոս երէց թո-
խաթեցի, որ ծանօթ էր իմ իր քերթածներով
և իրմէ օրինակուած տաղերու փոքր հաւաքա-
ծոյով մը:

Ձեռագիրս միջակաղիր, գրուած թուղթի վրայ՝
մօտ 600 էջէ, բոլորգիր մաքուր և ըմթեմըլի
յէջ 556 ունի հետեւեալ յիշատակարամբ. « Գրե-
ցաւ ազգիս և պատուական և ըմտիր տաղերս ի
յաստուածաշնոյ քաղաքն ի Կաֆա, ի զան ժա-
մանակս որ զօթաւ եախսմ ճալալիքն երեցին և
աւերեցին », և Ղազարաշին Մաֆարն ի դիմաց մի-
անտի եկայք փախըստական. միթէ ի հոս հաճ-
չիմք. մա՛ վասմ մեր բազում մեղացն ի հոս մեծ
սով եղև որ ըմաւ մարդ տեսեալ չէր. զի մէկ
կապի՞ծ ցորեանմ ի կարմիր ելաւ. և Ա կարմիրն
Դժ և Ծ ըստակ. զոր Տէր Աստուած զբարին և
զողորմութիւնն տայ ամենայն աշխարհի, մամա.
ւանդ զաֆա քաղաքին, բարեխօսութեամբ սրբոց
երկմաւորաց և երկաւորաց ամեն:

Աւարտեցաւ սա թիւն ԽԾԻ (= 1606) յունվարի
Ա. ձեռամբ ամարժամ և ամպիտան Մոսփառոս
թոխաթի իրիցուն ի գրումս սուրբ Լուսաւորչին,
Որք բամ իմէ օգտիք՝ յիշեցէք և ասէք « չայր
մեր որ յերկինս »:

Մոյմ տաղարանին մէջ (էջ 74) կայ հետեւեալ
քերթուածը սա խորագրով « Տաղ զարմամ՝ վար-
դին և պուլպուլին զրոյցք և պատասխանիք՝ Խա-
լատուր Կէշառեցի վարդապետի ասացեալ ». և
կը սկսի

Ի զենալն վարդին, եկեալ պուլպուլին.

Տաղիս ոմը և լեզուն որ այնքան կուռ չէ՝ վաւե-
րականութեամ մասին կասկածելի է և կը թուի
վեշտասամբերորդ դարու տաղասացի մը գործն
ըլլալ:

Քերթուածիս միւթը ինքնին մորութիւն մը չէ,
այսպէս երգած են Գրիգոր Աղթամարցիին և Յոր-
թամ՝ եղև զարում » ի անձամբ հեղինակ և այլք,
եւ արդէն Մոսփառոս թոխաթեցիին այս երեք
քերթուածներն ալ իրարու կից ընթերցանակած է:
Եէջ 57 սա խորագրով. « Այսուհետեւ սկսանիսք
զգարման զվարդին և զպուլպուլին տաղերն » և
մախ՝

Երթամ եղև զարուն եկ պուլպուլն այդին

յետոյ « Ի զմալն վարդին » և էջ 82 Գր. Աղթա-
մարցույ

Եստ զենալն վարդին եկ պուլպուլն այդին:

Այս երեք քերթուածներն ալ ինչպէս որ մօտ
են թէ՛ ձեռագիրս մէջ և թէ՛ գաղափարով՝ երեքն
ալ մոյմ տաղաշափութեամբ գրուած են:

« Երթամ եղև զարում »-ը մեզի շատ հանդի-
պած է Տաղարանաց մէջ և ոմամ տաճկերմ
թարգմանութիւնն ալ ունին, ինչպէս է մերկայ
ձեռագիրս. և Գ. Չոստամանցի իր թողովածոյ-
քին մէջ հրատարակած է զայս: Քերթուածիս
տաճկ սկզբատառները կը յօդան « Եարմարեալ

բամս ուրախութեամբ և յետոյ « ի զըմալըմ վարդիմ » ի սկզբնատառերը կը յօդն « ի խաչատուր ամմտէ ասացեալ է բամբս » : Թեւեւ երկու քերթումները երբեք կարծիք չեմ տար թէ ամբողջական քերթումս եմ կը կազմեն :

Որքամ որ « Յորժամ եղև զարոււ » ը և « ի զմալմ վարդիմ » ը իրարու հետ յարբմնութիւն մ'ունիմ արտաքին ձեւով , և ա'յսպէս Գ. Գոս. տանձնամիջի հրատարակած ¹ « Յորժամ եղև զարոււ » ը կը լուսաբանէ « ի զմալմ վարդիմ » ի ի խաչատուրէ : Գ'ըսէ Գ. Գոստամանացի . (էջ 65) « Տաղիս բնագիրը մեր սեփական տաղարանից է համուած , որի թուականն է 1696 . Օղյմը տեւսել եմք և 1617իմ գրուած , զերմագիրն է « Յարմարեալ բամս ուրախութեամբ ի խաչատուր վարդապետէ խորհրդացոյ » :

Ահա ուրեմն սոյմ տեղեկութիւնը մասամբ մը կասկածել կու տայ մեզ թէ մի' գուցէ և « ի զմալմ վարդիմ » ի խաչատուր վարդապետը ըլլայ ինքն խորհրդացի :

Բայց այս լուծելու և հաստատելու համար պէտք եմք խորհրդացի խաչատուրի ապրած դարը գիտնալ , որ պէտք է 1550էն առաջ ապրած ըլլայ . վասն զի « Յորժամ եղև զարոււ » ը իմ ծանօթ է 1553 թուականիմ գրուած Տաղարամէ մը :

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Վարդէն եւ պոռպուրէն զորոյց եւ պատասխանիք՝ խաչատուր կէտանցի վարդապետի ասացեալ :

Ի զընալըն վարդին եկեալ պուլպուլին ,
Որոնկով ըզնա ի բուր այգին
Յորժամ զնա ոչ եզիտ արտասուեաց յուզգին
Եւ զազազակ բարձեալ նա ողորմարին :

Խանդաղառեալ փարեք նա զայգեգործին
Ասէ . Օրհնեալ լինիս դու ի Սարալէն
Իթէ տացես նըշան դու զիմոյ վարդին
Ձի կարտով նորա մեռանիմ ասալն :

Ազգեգործն նրա պատասխան ասէն
Գիտակ չեմ քո վարդին տէրն վրկայէ
Բայց ժամանակ զաւր նորա մերմեալ է
Ձի ծաղկունքն այգոյս ամէն եկեալ է :

Վարդէք նա հանգուրծել զաւրտեան նորին .
Գրեալ թուիտ ասոցէ սիրելի վարդին .
Բարեւ զրկէք նորա կարտով սրբոյն
Փութայր նա հասանել տեսեալն նորին :

Ասէ . Ի պուլպուլէ թըռչնոցն յանէ
Շատ կարտիմ բարեւ իմ վարդին հասցէ .
Ի քո իսկ յամենուկ սիրտիս կասկածէ
Վախեմ թէ քեզ յանցանք ինչ պատահեալ է :

1. Տես « Նոր ժողովածու » Դ. պրակ էջ 5 :

Տըրտում կամ և տըրիւր ի յայտ աշխարհես
Աւելոնեալ ծրփիմ ի մարմնոյ նաւես
Կամ տատանեալ աւեօք ի մէջ ծովակիս
Եւ եզգան նըման հողմն շարժէ զիս :

Որպէս ըզբու նըտեալ եմ յաւերակի
Հանգոյն հաւաքանի ի յանապատի .
Միայնացեալ նըման եղէ ճընճըղի
Քունն է հատեք աչացս նըման կասկամի :

Իւժեալ կամ տատանեալ և չունիմ դադար
Ըզցայդ և ըզցերեկ որպէս խելազար .
Դու եւ հողոյս հողի , ' և յիսնէ հեռացար
Ուտեալ լոյս աչերուս փայցեր եմ խաւար :

Բամեալ թըռչնոցն դասք յերկրի երեւին
Ձւարացեալ ցընծան և ուրախ լինին .
Ձի են իսկ միտքան յերեսնց երամին
Եւ միայն տարակոյս յաշխարհես միջին :

Այլ առանց քո անսուղ չեմ եւ ապրելու
Եւ ոչ իսկ դազարի աչերս ի լալու
Շունչն հատեալ հողիս մընայ քեզ զալու
Հասիք շուտով , մերժեմ ի դունն ի մահու :

Նամակիս արասցես շուտով պատասխան
Եւ ինձ ծանուցանես զժամ քո զաւրտեան
Ձի կարացիք զիսեւ ի մտաց քոց բան
Թէ չէ ինձ հասանէ շուտով օր մահուան :

Միթէ ինձ խոսեալ եւ , ըզպատահան ասալ ,
Որ աշխարհ հեռացար ի յերկրի վերայ .
Մաղկունքն ամենայն այգոյս եկեալ կայ
Եւ միայն չերեւես դու ի մէջ նոցա :

Տեսանեմ ըզթըռչնոյս յուրախութեան կան .
Անասունք և զազան երամով խալտան .
Լողայինք ծովային և այլ օղական
Հըրմուեալ զըւարճանան և բերկրեալ ցընծան :

Եւ իմ հողոյս հողի վարդըզ ցանկալի
Դու եւ լոյս աչերուս և սին իմ սրբոյ .
Ձի առանց քո տեսուղ չեմ եւ կենդանի
Հասիք շուտով . միթէ ողջ զըտնուս յերկրի :

Առեալ վարդն ըզնամակ նորին ընթերցեալ
Իմացեալ զբան նորին և յողոց հարեալ .
Ողորմարին զիմօք արտասուս հատեալ
Պատասխանի թըլթոյ նորա զայս զըրեալ :

Սիրտս է ի սուղ մըտեալ վանց քո կարտուն
Շողոյս հողի պուլպուլ պատասխան թըռչուն
Իմ շունչ և իմ հողի — Իմ ուրախութեան
Դու եւ աչացս լոյս ' և իմ կենդանութիւն :

Աւաղ որ զըրկեցայ տեսուղ զազցրազին
Եւ կամ օտարացեալ յայտն նահանգին .
Միայնացեալ եղէ յերամոյս միջին
Եւ կամ տարակուսեալ դառն և լաւագին :

Տասունն ի Սարալէն առ մեզ աստեցալ ,
Եւ հողմն հիւսիսոյ ի մեզ դիպեցալ .

Զբօնորն սաստկութեան մեզ պատահեցաւ Տերեա իմ զեղեցիկ յիսնէ քափեցաւ :

Եղկել եմ դարձեալ և թըլուսական Զի ի բէն հեռացայ թըլուսն պատուական .
Հանդիստ լունիմ բընա ի քուն ' և արթնութեան
կարծեմ թէ մերժեցաւ առ իս օր մահունն :

Լաւ է ինմ մեռնել քան թէ կենդանի .
Զի առանց քո տեսող ինմ կենաց չի պիտի .
Ի քո շատ կարօտող շունջըս կու քաղի .
Բայց հոգիս քո գալուով մընայ և նայի :

Է ինմ խընդուն յայտ որ զմայնդ լըւայ
Զինչ որ ի յիմ շըրտիս կայր եւամ և դուսայ .
Գնացեալ յայտ քինն և ես դուրացայ
Եւ քոյին սուրբ տեսող արժան զիս արա :

Բերեալ զնմակ վարդին ետուն պուլպուլին
Կարդաց և իմացաւ զողջունէ նորին .
Ռարխացեալ ցընծայր ի մէջ պաղջային
Եւ գոհնայր զՏեառնէ զնա պարզեւողին :

Արշնէր զանկոյն Աստուած քաղցր եղանակով
Գովէր զըբանն Աստուած նա մայնի երգով
Բարեբանէր զՀոգին Աստուած ճըրճեւողով
ԶԵրբորդութիւնըն սուրբ անբաւ ճառելով :

Նայէր վարդին գալուն ի մայիս ամսուն
Փափաքէր կարօտով հասանել տեսոյն
Շըրջեալ աղաղակէր ի մէջ ծառերոյն
Որտեւող ըզգարն ի մէջ Թըբիբոյն :

Քաղցրիկ մայնի երգէ նըման հրէշտակաց
Ազաւելով հայցէր տըլողին բարեաց
Աւէր . ինմ ողորմա՛ մարդասէր Աստուած ,
Եւ կատարեմ զհայցուած թագաւոր փառաց :

Սրբունի Մարիամ կոյս Աստուածածին
Բարեխօսեա վան իմ Որդւոյդ միանին ,
Պահել ըզմեզ այժմուս և յապաղային
Փըրկել ի տանջանաց ճըրճ գեհննին :



ՓԱՌԱԿԱՆ ՆՇԱՄԱԿԱՑ

(Աղաքան. էջ 160)

Առ Յարգ. չ. Կ. Տ. Սահակեան

Յունիս ամսի Բազմալիսի թ. 6 մէջ
կարդացի վերոյիշեալ բառերի ուղղագրու-
թեանց մասին Զեր գրածները , և առա-
ջադրած նոր ուղղութիւնը , Մեր առաջար-
կած ընթերցման դէմ , դուք երկու պատ-
ճառ տալիս էք . ա , որ « քիչ մ'անընա-

կան կերպով հեռացած են իրարմէ յատ-
կացոյցին և յատկացեալն » . մինչդեռ « ի
դաշտն փառական նշամակաց » դարձեալ-
քի տեղ , « պատմական արձակի մը մէջ
կը սպասուէր աւելի ի փասական դաշտն
ճշամակաց » . Էւ թ . « Փասական »-ը ածա-
կան մը լինել կարծիր էր :

Առաջնոյն կը պատասխանեն որ հայե-
րէն շարադրութեանց անպայման ազատու-
թիւնը , լեզուի բնութիւնն , հայուն ինքնու-
րոյն մտքերի բացատրութիւնը , շատ ան-
գամ ոչ թէ « քիչ մ'անընական կերպով »
հեռացնում են բացայայտիչ ու բացայայ-
տեալը , այլ երբեմն այնքան անընական և
անորոշ լինում են միջանկեալ լրացուցիչ
պարագաների շնորհիւ , մինչեւ քուն իմաս-
տը մուկ և անհասկանալի կը մնայ , և
այդ արձակ համարձակ խօսելու և զրելու
կերպը , մեր մէջ կոշուեր է ձեռառ շարա-
դրութիւն . ուստի « ի դաշտն փառական
նշամակաց » և « ի փառական դաշտն նշա-
մակաց » նոյն լինելէն զատ , ձեր առա-
ջարկած ընթերցումն դժբաղդաբար « քիչ
մ'ալ ոսկեղարեան չէ » : Այլ է՝ եթէ հայե-
րէն շարադրութիւնը ունենար գաղղիական
խիստ պատճառաբանեալ ձեւագրութիւնը ,
և նոյն լեզուի յատկաբանութիւնները , յի-
րաւի « քիչ մ'անընական » պիտի լինէր
ասել « ի դաշտն փառական նշամակաց » .
որպէս խիստ անընական է գաղղիերէն
փոխանակ ասելու un clou de fer, ա-
սէինք un fer de clou կամ de clou
un fer, և այլն մինչ հայումս կ'ասենք
երկաթեայ մի գամ կամ գամ մի յերկաթոյ
(երկաթեայ) :

Բ . « Փասական » իբրեւ ածական ընդ-
ունել ոչ մի ժամանակ չեն ներեր ոչ
պարբերութեան շարադրութիւնը և ոչ պատ-
մական պարագաները : Որովհետեւ նախ ա-
սենք որ բացայայտիչ և բացայայտեալը
գտնուէն և յարմար կերպով մէկ ածակա-
նով մ'եւս տեղաւորելէն զինի , հարկաւոր
էր ամրացնել մի ենթակոյի վրայ , որպէս
զի մեր միտքն եւս այդ անանոն դաշտի
մէջ « Թափառական երամակներու » ե-
տեւից յափտենական չթափառի , Հարկաւ